ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/229

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Բոքստեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Բոքստեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Գաբրիելյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ծախսային նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14618-2020 գրությամբ «Բոքստեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2958-2020 գրության հիման վրա, 28.09.2020թ.-ին «Բոքստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 28.09.2020թ.-ին:

28.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/229 համարի ծածկագիրը:

08.10.2020թ.-ին և 28.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.10.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2958-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ներկայացված հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Բոքստեր» ՍՊԸ–ն (ՀՎՀՀ 02279963): Անգործության ժամկետի ավարտից հետո www.armeps.am համակարգի միջոցով «Բոքստեր» ՍՊԸ–ին ուղարկվել է կնքվելիք պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել, սակայն վերջինս գրությամբ տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագիր կնքել Ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բոքստեր» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Բոքստեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 29.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Բոքստեր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14618-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգի Ձեր դիտարկմանն ենք ներկայացնում „Բոքստեր" ՍՊԸ-ի կարծիք-դիրքորոշումը ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի կողմից նախաձեռնված ՀՀ ֆինանսների նախարարությունը 28.09.2020թ. թիվ 26/26-1/14618-2020 գրությամբ «Բոքստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ Ընթացակարգ) ներկայացված հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Բոքստեր» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02279963):

Մերը ընկերությունը մինչ օրս մասնակցելով գնումների գործընթացներին, մշտապես ցուցաբերել է բարեխիղճ մատակարարի վարքագիծ և ըստ այդմ, մշտապես ժամանակին և պայմանագրով սահմանված որակական հատկանիշներով ապրանք է մատակարարել Պատվիրատուներին:

ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26 ծածկագրով գնման ընթացակարգին հաղթող ճանչվելուց հետո, երբ ստացել ենք պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկ, պարզել ենք, որ պայմանագրի Ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով թյուրըմբռնում է եղել և տեխնիկական չափորոշիչները ճիշտ չեն ընկալվել մեր կողմից, ինչի արդյունքում մինչ պայմանագրի կնքումը պարզվել է, որ 5-րդ չափաբաժնում նշված մեկուսիչ ժապավենների գնառաջարկ է ներկայացվել մեկ հատի համար, սակայն պարզաբանման արդյունքում պարզվել է, որ տվյալ ապրանքի մեկ հատը առնվազն 50 և ավել մետրից է բաղկացած, ինչի արդյունքում նախնական գնառաջարկման հայտում ներկայացվել է տվյալ ապրանքի շուկայական արժեքից առնվազ 50 անգամ փոքր գումար, ինչը ինքնին հանգեցրել է մեզ

անելանելի դրության՝ տվյալ ապրանքը ձեռք բերելու և հայտում ներկայացված գնից առնվազն 50 անգամ բարձր գնով ձեռք բերելու մատակարարելու հարցում:

9-րդ չափաբաժնում նշված դարձիչների համար ներկայացված գինը իսկզբանե ներկայացվել է՝ որպես գլխիկավոր դարձիչների համար, սխալ տեխնիկական բնութագրի ընկալման արդյունքում: Մինչ պայմանագրի կնքումը՝ բացահայտելով թյուրիմացաբար սխալ ներկայցված գնառաջարկը, մենք գիտակցելով ամբողջ պատասխանատվությունը գրավոր ձևով հայտնել ենք ստեղծված իրավիճակի մասին, որ չենք կարող ապահովել 5-րդ և 9-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքների մատակարարումը և հստակ պարտավորվածություն ենք հայտնել ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26 ծածկագրով սահմանված բոլոր չափաբաժինները ժամանակին մատակարարենք ՊՆ:

Մեր գործողություններում իսկզբանե չի եղել միտումնավոր որևէ իրավախախտում կատարելու մտադրություն կամ ստանձնած պարտավորություններից խուսափում:

Ամբողջությամբ գիտակցելով մեր կողմից թույլ տրված աշխատանքային անփութությունը և դրա արդյունքում պայմանագրի ամբողջ ծավալով ամրագրված պարտականությունների կատարման անհնարինությունը, խնդրում ենք վերոհիշյալ պարտականությունների չկատարում չդիտարկել որպես միտումնավոր պարտակա-նությունների կատարումից խուսափում և մեր ընկերությունը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռել հետայսու մեր կողմից ստանձաց բոլոր պարտավորությունները կատարել ամբողջ ծավալով, ժամանակին և որակով՝ ի բարորություն ՄԵՐ երկրի, բանակի հզորացման:

Ակնկալում ենք Ձեր ընբռնումը/ներողամտությունը այս միանվագ դիպվածի իրավական գնահատականի ներկայացման հարցում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/229 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ծախսային նյութերի ձեռքբերման նպատակով 20.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բոքստեր» ՍՊԸ-ն:

iii. «Բոքստեր» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 18.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 28.08.2020թ.-ին Հանձնաժողովը որոշել է մի շարք չափաբաժինների մասով ընտրված/հաղթող մասնակից ճանաչել «Բոքստեր» ՍՊԸ-ին:

v. Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշել է հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 08.09.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի boxter.llc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

vii. Մասնակիցը 16.09.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

viii. Հանձնաժողովի 18.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Բոքստեր» ՍՊԸ-ի հայտը 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով և հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալներն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն' գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14618-2020 գրությամբ «Բոքստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջա-նառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը՝ անհրաժեշտության դեպքում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության

դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Օրենսդիրը, պայմանագրի և/կամ պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և/կամ որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: **Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:**

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ծախսային նյութերի ձեռքբերման նպատակով 20.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, մի շարք չափաբաժինների մասով, հայտ ներկայացրած «Բոքստեր» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 18.08.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության հիման վրա, մի շարք չափաբաժինների մասով, ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 08.09.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի boxter.llc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-4/26» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Մասնակիցը 16.09.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

Հանձնաժողովի 18.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Բոքստեր» ՍՊԸ-ի հայտը 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով և հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալներն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն' գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից Պատվիրատուին ուղղված 16.09.2020թ.-ի գրությամբ հաստատվում է այն հանգամանքը, որ «Բոքստեր» ՍՊԸ-ի կողմից

կատարվել են այնպիսի գործողություններ, որոնք վկայել են վերջինիս կողմից ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բոքստեր» ՍՊԸ-ի գործողությունները, այն է՝ որպես ընտրված/հաղթող մասնակից, Օրենքով և Կարգով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով ընթացակարգի 5-րդ և 9-րդ չափաբաժինների մասով պայմանագիր և հրաժարվելով այդ մասով պայմանագիր կնքելուց, հանգեցրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով սահմանված պատասխանատվության առաջացմանը, որպիսի պայմաններում Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14618-2020 գրությամբ «Բոքստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/229 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Բոքստեր» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**